

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմային խմբագրատան մէջ:  
Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Redaction «Mschak».

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

## ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Արտասահմանեան հայոց լրագրութեան փա-  
սակար մտքերը.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆինանս-  
ների հարցը. «Արարատ» ամսագրի մի նկատու-  
թեան առթիւ. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջազգային յարաբերութիւնները.  
Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.— ԽՈՒՆ  
ԼՈՒՐԵՐ.— Հեռագրային.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅԱՐԱ-  
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երևանի նահան-  
գի տնտեսական դրութիւնը:

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅՈՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՆԱ- ՍԱԿԱՐ ՄՏՔԵՐԸ

Երբ որ մամուլը փոխանակ առաջնորդե-  
լու հասարակաց կարծիքը, մոլորեցնում է  
նրան,— նա իր բուն կոչմանը չէ ծառա-  
յում: Հրապարակախօս, պոքրիկ լինելի  
հեշտ բան չէ պէտք է բազմակողմանի  
մտաւոր զարգացում ունենալ հասարա-  
կաց կարծիքին լուրջ ուղղութիւն տալու  
համար: Հակառակ դէպքում, երբ մարդը  
իր մտաւոր զարգացմամբ անպատրաստ է  
լրագրական գործունէութեան, նա սխալ  
մտքեր տարածելով մեծ վնաս կարող է  
բերել հասարակութեան, ի չար գործածե-  
լով մամուլի ոյժը:

Կարելի է դիցուել տաղանդաւոր վիպա-  
սան լինել, բայց անընդունակ հրապարա-  
կախօս: Այդ դէպքում մարդը պէտք է իր  
չափն ու սահմանը ճանաչի և այնքան  
անձնավստահութիւն, անձնապաշտութիւն  
չունենայ, որ մտնի այն փոստիկանի տա-  
պալէքը, որին ոչ իր խելով, ոչ իր կրք-  
թուութեամբ, ոչ մտաւոր պաշարով պատ-  
րաստ չէ: Այնչէս այնքան փոստիկանի  
փնտրումը չէ, որքան մարդկանց վստա-  
հութիւնը յամառութեամբ շարունակել  
հասարակաց որ և է գործունէութիւն, ո-  
րին իրանք ձեռնհաս չեն:

Շատ տարի սրանցից առաջ, այս օրերս  
վախճանված տաղանդաւոր վիպագրող զօկ-  
տօր Յովսէփ Դիմանեան (Դիման) սկսեց  
ձմեռանայի «Մամուլ Արեւելեան» ամսա-  
գրի մէջ մի շարք յօդուածներով քարոզել  
թիւրքաց հայերին իրանց հայրենիքից  
դէպի Ամերիկա խմբովին գաղթելու ան-

հրաժեշտութիւնը: Մենք չէինք խօսի այ-  
ժմ այդ յօդուածներին մասին, մանաւանդ  
որ իր ժամանակին «Մշակ» պատասխա-  
նել էր հանգուցեալի փնտրական մտքերին,  
ստատիկ մաքառելով նրա յայտնած կորու-  
տաբեր գաղափարների դէմ, եթէ արտա-  
սահմանեան հայոց մամուլի մէջ Դիմա-  
նեանի ձեռքով սերմանած այդ փնտրական  
մտքերը այժմ չը սկսէին աճել և ընդհան-  
րանալ նոյն մամուլի մէջ:

Նրանք որոնք իրանց անձնական ապա-  
հովութեան համար Հայաստանից դադ-  
թում են Ամերիկա, երբեք չեն փոստահա-  
նայ այսօր այդքան յանդուգն կերպով քա-  
րոզել հայրենիքում մնացողներին թողնել  
տուն ու տեղը, հողն ու հայրենիքը, եթէ  
այդ փնտրական քարոզութեան տապալիչի  
վրա ունեցած չը լինէին մի այնպիսի  
համբաւաւոր կարգաւոր, ինչպէս մեր գը-  
րակնութեան մէջ յայտնի զօկտօր Դիմա-  
նեանն էր: Հանգուցեալն է սերմանել մեր  
մամուլի մէջ այդ փնտրական մտքերը, որոնք  
արժանի են միմային մի թուլամորթի,  
վախկոտ ազգի: Փախչել փոստիկանի կամ մի-  
մային տնտեսական և բարոյական ծանր  
անապահով վիճակից, շարունակ հայրենիքը  
դաւաճան լինել իր պարտաւորութիւննե-  
րին լուր իր անձնական ապահովութիւնը  
աչքի առջև ունենալով:— Ի՞նչ անուն  
տանք այդ տեսակ վարմունքին:

Եւ Դիմանեանի հեղինակաւոր գրքի մի-  
ջոցով քարոզած այդ փնտրական գաղա-  
փարները այժմ աճելով աճում են արտա-  
սահմանեան հայոց մամուլի մէջ:  
Ահա ինչ է նշանակում երբ հրապարա-  
կախօսական կոչմանը անպատրաստ մի  
անձնավստահութիւն, մանաւանդ մի անձնա-  
ւորութիւն, որ ունի մեծ անուն գրակա-  
նութեան ուրիշ ճիւղի մէջ, այն է վիպա-  
կան ճիւղի մէջ,— վստահութիւն է պոքրի-  
կիստի գրիչը վերցնել և յանդգնում է ա-  
ռաջնորդել, ղեկավարել հասարակաց կար-  
ծիքը:

Թող այդ լաւ դաս լինի մեր այն թղթի  
հրապարակախօսներին, որոնք ոչինչ մտա-  
ւոր պաշար չունենալով իրանց գլխում  
կատարելապէս անպատրաստ հրապարակա-  
խօսական գործունէութեան, յանդգնում են  
ղեկավարել հասարակաց կարծիքը իրանց

սխալ փնտրական և փոստիկան մտքերով  
լի յօդուածներով...

Գիտաբանութիւնն այն է, որ այդքան տանի  
մէջ անպիտան խոսքեր սերմանած սերմերը  
միշտ աւելի աշողութեամբ աճում են քան  
լաւ բոյսերը և շատ անգամ խեղդում են էլ  
լաւ բոյսերին: Գրականական այդքան տանի  
մէջ թեթեւամտութեամբ սերմանած անպի-  
տան սերմերը, գիտաբանական, շարունակում  
են աճել նոյն իսկ սերմանողի մահից յետոյ  
էլ:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ռուսաստանի ֆինանսական դրութեան և ու-  
սաց թղթագրամի արժէքի հարցը վերջին ժամա-  
նակներս ամեն տեսակ դատողութիւնների առիթ  
տուեց եւրոպական մամուլին: Պատասխանելով  
տեղեկութիւնների յայտնած մտքերին, Պե-  
թերսբուրգի կրթապաշտօնական «Journal de St.  
Petersbourg» լրագիրը, ինչպէս մեզ հետագրում է  
«Հիւսիսային գործակալութիւնը», մարտի 11-ից  
գրում է հետեւեալը. «Արտասահմանի շատ լրա-  
գիրներ, ինչպէս երևում է, հիասթափվել են այն  
պատճառով, որ իրանց նախագուշակութիւնները  
չարդարացան, որոնցով նոքա պնդում էին, թէ  
վիւժակ կայրի մահից յետոյ Ռուսաստանի  
և Գերմանիայի յարաբերութիւնները կը վատա-  
նան: Այդ բանը տեղի չունեցաւ, և երկու պե-  
տութիւնների մէջ եղած յարաբերութեան բարե-  
կամական բնագործութիւնը մինչև անգամ արտա-  
յայտվեցաւ բոսնայի տարածադրութեան վրա: Այդ  
բանը, ինչպէս երևում է, դուր չէ գալիս «Keoln.  
Zeit.» լրագրին, որը զայրացած կերպով նկարա-  
գրում է Ռուսաստանի տնտեսական դրութեան  
մոլթ պատկերը: Լրագիրների անհիմն մտքերը  
հերքելու համար պէտք կը լինէին շատ թւանը-  
շաներ, բայց և մի քանի ապացոյցներն էլ բա-  
ւական են նրանց անբարեկեցութիւնը ցոյց տա-  
լու համար: Սպասելով վերջին ֆինանսական  
տարվայ մուտքի և ելքի հաշուեկշիւին, որը շու-  
տով պէտք է հրատարակվի, և որը ցոյց կը տա  
թէ որքան անհիմն են «Keoln. Zeit.»-ի դատո-

ղութիւնները, որոնք վերաբերում են պետական  
գանձարանի հարստութեան, այդքան կասկած  
որ 1886 թւականին գանձարանը ունէր միլիոն-  
ներով և տասնեակ միլիոններով յոշմարի 1-ին  
26-ի, փետրվարի 1-ին 52-ի, մարտի 1-ին 22-ի,  
1887 թւականին արդէն աւելի, իսկ 1888 թւ-  
ականին յոշմարի 1-ին 78-ի, փետրվարի 1-ին  
108-ի, մարտի 1-ին 96-ի, և քանի որ վերջին  
ամիսների ընթացքում տեղի չեն ունեցել ոչինչ  
կրեդիտական գործողութիւններ, ուստի այդ թւ-  
անշանները ցոյց են տալիս, որ հասոյթները տե-  
ղի են ունենում կանոնաւորապէս և արագօր  
կարգի ծախքեր չեն եղել: Այդ բոլորը շատ քիչ  
նմանութիւն ունի «Keoln. Zeit.» նկարած մոլթ  
պատկերի հետ:

«Journal de St. Petersbourg» լրագիրը, ինչ-  
պէս մեզ հետագրում են մարտի 13-ից, մատնա-  
նիչ անելով «Keoln. Zeit.» լրագրի Ռուսաստանի  
ֆինանսներին վերաբերեալ հաղորդած նոր և ան  
հիմն տեղեկութիւնների վրա, ի միջի այլոց  
յայտնում է, որ անցեալ տարվայ երկրորդ կիսա-  
միտում օտարերկրացի մի քանի դրամատերեր  
յիբաւի առաջարկութիւններ են արել փոխառու-  
թեան մասին, բայց այդ առաջարկութիւնները  
չընդունվեցան ոչ թէ դրամատերերի առաջարկած  
պայմանների պատճառով, այլ լավ այն պատճա-  
ռով, որ դրա անժամանակակից համարվեցան  
կառավարութիւնները փոխառութիւնների են դի-  
մում այն ժամանակ, երբ այդ համարում են ան-  
հրաժեշտ, բայց ոչ թէ այն ժամանակ, երբ այդ  
բանը յարմար է ձեռնարկողների համար: Դրանից  
աւելի փոքր հիմք ունի «Keoln. Zeit.» լրագրի  
հաղորդած այն լուրը, որ իբր թէ մեր ֆինանսա-  
կան վարչութիւնը ինքն է փորձել արտասահմա-  
նում փոխառութիւն անելու: Այդպիսի փորձեր  
չեն եղել:

## «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԵԱՆ Ա- ՌՈՒԹՈՎ

«Արարատ» ներկայ տարվայ յոշմարի տե-  
րակում եր. 64 կարդացինք, որ «Բեսարաբիոյ,  
Ղարաբաղի և Աստրախանի թեմերը նախանձա-  
խնդիր լինելով ս. Աթոռոյ և ձեռնարանի բարգա-  
ւաճման և չը նայելով իրանց դրամական անձուկ  
դրութեան, չեն դանդաղում մասն հանել վիճա-

կան ապրանքների շարքում տեղական շատ ան-  
նշան բան գտանք: Այժմ մի այլ հարց է ծագում,  
— կարծիք էին վաճառվել, եթէ եւրոպական ապ-  
րանքների փոխարէն տեղական լինէին: Շատ դը-  
ժուար հարց է, մանկութիւնից սովորութիւններս  
փոխած լինելով այժմ մենք անկարող ենք չելա  
շապիկ հագնել, անագին մերթէ զտակ ծածկել,  
սիկից կարած կօշիկներ հագնել, ամեն առաւօտ  
և երեկոյ անպատճառ պիտի թէյ խմենք, որի  
հետ անհրաժեշտ է չաքար և այլն, մանկութիւ-  
նից սովորել ենք նուրբ գործուածներ հագնել, որ  
սովորեցրին և մեր մէջ տարածեցին մեր վաճա-  
ռականները, մենք էլ կարծեցինք թէ արտաքին  
տեսքը փոխելով քաղաքակիրթ ազգերի շարքը  
կանցնենք: Այնքան զարգացած էլ չենք, որ կա-  
րողանանք չը կատարել «մոզայի» չապլ և ան-  
տեղի պահանջները:

Դառնանք այժմ այն խնդրին, թէ մեր վաճա-  
ռականները ինչ դեր են խաղում այս գործողու-  
թեան մէջ:— Ով ձեռք է գցում մի գումար, իս-  
կայն ուղղորդում է Նովոքոթոյ, Մոսկվա կամ մի  
այլ հեռաւոր քաղաք, որպէս զի եւրոպացիների  
պատրաստի ապրանքները գնելով բերէ, և իր հայ-  
րենիքում վաճառելով փող աշխատէ, որով վա-  
տարկում է վաճառական անունը: մի քանի ան-  
գամ նոյն գործողութիւնը կրկնելով յիշեալ դրա-  
մատէրը մի յայտնի չըջանում դատարկում է փո-  
ղը, անդադար եւրոպացիների ապրանքների հետ  
փոխարինելով իսկ ապրանքը նոյն չըջանում,  
որտեղից փող է դուրս գնացել, գործածվելով  
մաշվում, ոչնչանում է: Եւ ասում եմ դատարկ-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՑՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Թարգելի ընթերցող, մինչ անցանք Երևանի  
վաճառանոցի մէկ ծայրից միւս ծայրը, բայց չը  
կարողացանք անուշ անել այդտեղի քաղցր խաղո-  
ղից պատրաստած սուճուղը, որ նախանձելի տեղ  
կարող է բռնել եւրոպական կոնդիտերների ձեռ-  
քով պատրաստվող քաղցրեղենների շարքում:  
Խոճալի Երևան, ամեն բան արտադրում է քո  
հողն ու ջուրը, սակայն քո վաճառական-արդիւ-  
նաբերողները ոչ մի կերպով չեն ուզում յայտնել  
իրանց երախտագիտութիւնը:

Մեզ մասնացոյց կանեն բամբակի եռացող  
առևտուրի վրա, որ արտահանում են տեղացի  
վաճառականները, բայց պէտք է դիտենալ, որ  
բամբակի դէմ կարող է մրցել Բրոզսիու շաքարը  
միայն: Վաճառականները ինչ եռանդով որ բա-  
բակ են արտահանում կրկնակի եռանդով ներս  
են բերում շաքար և թէյ: Ապա միւս ապրանքնե-  
րի և անագին քանակութեամբ ստացած մանու-  
ֆակտուրայի փոխարէն ինչ է արտահանվում մեր  
երկրից. ոչինչ, կամ շատ աննշան բան: Եթէ  
այդ բամբակն էլ չը լինէր, որ փորը ի շատէ  
կենդանութիւն է տալիս գիւղացիներին և վաճա-

ռականներին, բոլորովին կորած կը լինէր Երեւ-  
անի նահանգի գիւղական դասը:

Մեզ մասնացոյց կանեն և պ. Ներսէս Թայ-  
րեանի գինեգործարանի վրա, որ, ինչպէս ասում  
են, այս տարի 1,000 խալվար խաղող գնելով, օ-  
ղի և գինի է շինել և անշուշտ Օղէսայով Ռու-  
սաստան կուղարկէ: Այժմ, մեծ չնորհակալութեան  
արժանի է այդ մարդը իր տուած օրինակի հա-  
մար. բայց ան դեռ իր որրանի մէջն է, անցեալ  
տարի է միայն հիմնվել այդ գործարանը: Երկար  
կեանք կունենայ դա: Կը մնայ պ. Թայրեանի  
ձեռքում, թէ մի ուրիշ եւրոպացու ձեռքը կանց-  
նի: Անկասկած եմ, որ եթէ յայտնվի մի ֆրան-  
սիացի կամ գերմանացի և պ. Թայրեանին մի  
քանի հազար ռուբլի օգուտ առաջարկէ, իսկոյն  
վերջինս կը համաձայնվի օտարականներին յանձ-  
նել իր գործարանը, ինչպէս Բագուում պ. Ծահե-  
դանեան իր երկաթէ (մեխանիկական) գործարա-  
նի թախի ու թուխից ձանձրանալով կամենում  
է ծախել մի ինչ որ Լիտուի վրա: Երանի թէ եւ  
սխալված լինեմ, բայց այդ հայերիս յատկութիւնն  
է, որ տոկոսութեամբ մի օգուտէտ դործ առաջ  
տանել չը դիտենք, բայց անպատուութիւնից, որ  
տանում ենք զուարճութեամբ:

Եթէ մէկ գինեգործ կարողանում է նշանաւոր  
օգուտ տալ այդտեղեքներին, հեռու տեղից փող բե-  
րել հայրենիք, որքան օգուտ տուած կը լինեն,  
եթէ մի քանի գինեգործ արտահանողներ լինեն,  
որքան օգուտ տուած կը լինեն գերջակ (конец-  
вина) ցանողներին, եթէ կանոնաւոր ձիթահանքեր  
լինեն, որքան օգուտ տուած կը լինեն կանեփ

ցանողներին, եթէ մի քանի թուի գործարաններ  
հիմնվեն և այլն:

Անշուշտ մօտիկ ապագայում Երևանով կանցնի  
երկաթուղին, որի համար եւ սարսափում եմ,  
երկաթուղիով այն ժամանակվայ մեր դրութիւնը  
եթէ եւրոպացիներ երկրպագու հաղթարաւոր վերս-  
տեր մեղադրից հեռու նստած կարողանում է մեզ  
անանկացնել, ապա ինչպէս կը վարվի, եթէ ձա-  
նապարհները բոլորովին մատչելի դառնան նրան:  
Մեր այս անշուշտ խելով, այսպիսի ստոր պատ-  
րաստութեամբ կարող ենք մրցել հակա եւրոպա-  
ցիների հետ: Եթէ այժմ մենք անկարող ենք լի-  
նում դիմանալ նրանց արտադրած ապրանքներին,  
ինչպէս պիտի դիմադրենք հէն իրանց եւրոպա-  
ցիների հասանքին, որ սկսվելու է անշուշտ եր-  
կաթուղին տեղա հասնելուն պէս: Մեր անշուշտ-  
ղուտ — բոտանչիներով, խղարչի — խառնանքով,  
զարկններով ինչպէս պիտի դիմադրենք նրանց  
գիտական տեխնիկներին, կապիտալիստ և կա-  
տարելադրութեամբ մեղենագէտներին ու երկրագործ-  
ներին:

Ֆինանսով մեր դրութիւնը, իմացանք թէ ինչից  
է առաջացել մեր մանկութիւնը. այն է՝ եւրո-  
պացիներից ապրանք ստանալով մաշվում ոչնչա-  
նում է մեր երկրում, իսկ նորա փոխարէն մեր  
տուած փողերը դնում են հեռաւոր երկրներին ան-  
դառնալի կերպով: Մենք զիտենք արդէն, որ Ե-  
րևանի նահանգը անբերելի երկիր չէ, կը յու-  
սացվի, որ, բացի Բաղդադի խուրմայից, ամեն  
բան բուսցնէ Երևանի կլիման: Այնքան նաև Ե-  
րևանի վաճառանոցը, որտեղ բազմաթիւ եւրոպա-











